



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Թ Ի Վ 6

**ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԵՈՐՀՐԴԻ՝
2019 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ**

Օրակարգում՝

1. 2019-20 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքները ֆակուլտետում:
2. Հեռակա ուսուցման մագիստրոսական ավարտական թեզերի պաշտպանության հանձնաժողովի նախագահի և անդամների թեկնածությունների հաստատում:
3. Ընթացիկ հարցեր:

Ողջունելով գիտխորհրդի նիստի անդամներին՝ հայ բանասիրության ֆակուլտետի ղեկան պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, որ ֆակուլտետի գիտական խորհրդի 37 անդամներից նիստին մասնակցում է 27-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ծանոթացրեց օրակարգի հարցերին, որոնց քննարկումը միաձայն ընդունվեց բաց քվեարկությամբ:

1-ին հարցի առթիվ ելույթ ունեցավ ղեկանի տեղակալ դոց. Ա. Սարգսյանը: Նա տեղեկացրեց, որ ընթացիկ քննություններն արդեն հաջողությամբ ավարտվել են, և ղեկանատը կազմել է բանավոր քննությունների գրաֆիկը: Զեկուցողը նկատեց, որ այս տարի ա-

ռաջին անգամ դեկանատն ինքն է նշանակել քննաշրջանի ժամանակացույցը՝ համարելով, որ կուրսերի կողմից կազմված գրաֆիկները հաճախ խոցելի են լինում. գործինակ անփութորեն քննություններ են նշանակում շաբաթ կամ կիրակի օրերին և այլն:

Օրակարգի **2-րդ հարցը** նվիրված էր հեռակա ուսուցման մագիստրոսական ավարտական թեզերի պաշտպանության հանձնաժողովի նախագահի և անդամների թեկնածությունների հաստատմանը: Պրոֆ. Ա. Ավագյանն ասաց, որ առաջարկ կա նախագահի պաշտոնում հաստատել բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գայանե Գևորգյանի թեկնածությունը: Գիտխորհրդի անդամները հավանություն տվեցին այդ թեկնածուի հաստատմանը՝ նկատելով, որ նախորդ տարիների փորձը ցույց է տվել, որ նա, հիրավի, բանիմաց ու անաչառ մասնագետ է: Այնուհետև հաստատվեցին նաև հանձնաժողովի անդամների թեկնածությունները՝ Բ. Գ. Ղ., պրոֆ., պրոֆ. Լիանա Հովսեփյան, Յուրի Ավետիսյան, Բ. Գ. Թ., դոց., դոց. Սեյրան Գրիգորյան և Լիլիթ Սեյրանյան:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐՈՒՄ ԼՍՎԵՑԻՆ.

ԼՍԵՑԻՆ – ԵՊՀ-ի ընդհանուր լեզվաբանության ամբիոնի հայցորդ **Հռիփսիմե Վանուշի Կոստանյանի** թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի նշանակման հարցերը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Լ. Հովսեփյանը, Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը և դոց. Վ. Պետրոսյանը:

Առաջարկվեց՝ Հռիփսիմե Կոստանյանի թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել՝ «Արդի գրական հայերենի և ռուսերենի գոյականական կարգերի զուգադրական քննություն», գիտական ղեկավար հաստատել ամբիոնի վարիչ Բ. Գ. Թ., դոց. Վարդան Պետրոսյանին:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Հաստատել Հռիփսիմե Վանուշի Կոստանյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Արդի գրական հայերենի և ռուսերենի գոյականական կարգերի զուգադրական քննություն»:

2. Գիտական ղեկավար հաստատել ամբիոնի վարիչ Բ. Գ. Թ., դոց. Վարդան Պետրոսյանին:

ԼՍԵՑԻՆ.- Հայոց լեզվի ամբիոնի դոցենտ, ր. գ. թ. **Արևիկ Բամայանի**՝ «Թարգմանության տեսության հիմունքներ» ձեռնարկը տպագրության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. – Բան. գիտ. դոկտոր, պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը և Բան. գիտ. թեկն., դոց., դոց. Ա. Տեր-Մինասյանը և Բ. Ներսիսյանը:

Նկատվեց, որ տպագրության ներկայացվող ձեռնարկը կարող է օգտակար լինել ոչ միայն սկսնակ, այլև գործող թարգմանիչների, խմբագիրների և ընդհանրապես թարգմանությամբ ու թարգմանաբանությամբ հետաքրքրվողների համար:

Սույն աշխատանքի խմբագիրն է ասիստենտ Մարիամ Կիրակոսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հայոց լեզվի ամբիոնի դոցենտ, ր. գ. թ. **Արևիկ Բամայանի**՝ «Թարգմանության տեսության հիմունքներ» ձեռնարկը երաշխավորել տպագրության:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ

ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ